26. Օ՜Ֆ - Օ՜Ֆ

Կէղնի-չէղնի իրիկմ ու կնիկ մի, ըդրանց լե կէղնի տղե մի: Էդ տղեն լե իսկի բան չգինա. նա կարդալ, նա սանաթ:

Էդ տղեն կը ծռի թագավորի աղջկա վրեն, կըսե ուր մամուն.

- Նանե՛, գնա ընծի թագավորի աղջիկ հուգե:

- Տո, տղա՛, լաո՛, քու պապ աղքատ, ավուր հացի կարոտ, մենք հիմալ էրթանք թագավորի աղջիկ հուզինք, չէ՞ զմզի կը մորթին, դու լե սանաթ մի չգինաս, օր ըսիմ, հան տղես սանաթ մի գինա:

- Չէ՛, նանե՛, իլաի օր պտի էրթաս հուզիս:

Հիրկուն օր տղի պապ տուն էկավ, տղի մամ ըսեց. - Հմլա բան կա, քու տղեն կըսե՝ գացեք թագավորի աղջիկ հուզեք:

Պապ կըսե. - Տղա՛, լաո՛, խելքտի թռուցե՞ր իս:

- Չէ, կյակե, - կըսե, - պտի էրթաս հուզիս:

Չէղնիր տղի վրեն, կէրթա տղի պապ թագավորի մոտ, թագավոր կըսե.

- Ընչի՞ համար իս էկի:

- Թագավո՛ր ապրած, քու աղջիկ պտի տաս իմ տղին:

- Իմ աղջիկ իմալ տամ քու տղին, քու տղեն սանաթ գինա՞:

- Չէ, վոլա, չգինա:

- Գնա, զքու տղեն բի, տսնամ:

Մարդ կէրթա զուր տղեն կառնի, կը դառնա թագավորի կուշտ:

Թագավոր կը հարցու. - Տղա՛, դու սանաթ գինա՞ս:

- Չէ, չըմ գինա:

- Օր հեմալ է, գնա սանաթ սովրի, արի, իմ աղջիկ կիտամ քզի:

Տղի պապն է, կառնե զուր տղեն, կէրթա, օր տանե տեղ մի աշակերտ իտա: Շատ կէրթա, քիչ կէրթա Աստված գինա, գիկա գոլի մի ըռաստ. էդ գոլի մոտ քար մի կէղնի, պապն կիջու շալկեն զտղեն, կը դնե գետին, ինք լե դադրուկ կէղնի կէնե՝ օ՞ֆ-օ՞ֆ:

Օր կէնե՝ «օֆ-օֆ» մեկ լե կը տեսնե օր գոլի միջեն բըբռեջ մարդմ դուս էկավ:

- Ի՞նչ կըսիս, մա՛րդ, հորի զիս կանչեցիր:

- Տո, աղբե՛ր, ես դադրուկ ենք, էրի «օֆ-օֆ»:

- Իմ անուն՝ Օֆ-օֆ է. էդ տղեն հո՞ւր կը տանիս:

- Կը տանիմ օր տեղ մի աշկերտ իտամ, սանաթ սովրա:

- Ըպա տուր իմ մոտ. աղեկ վարպետ իմ ես, կը սովրցում. տարիմ էլ հըսօր արի տար:

- Շատ աղեկ, - ըսեց պապն ու թողեց զտղեն ու դառցավ տուն:

Բըբռեջ առավ զտղեն, գնաց ներս: Տղեն թողեց հոնի, ինք հելավ դուս:

Բըբռեջի կնիկ ապսոսաց զտղեն. առավ տարավ ուրանց...օր ջանդակ ու գլխով բադան էր, էդ կնիկ ըսեց. - Տղա՛, կը տեսնա՞ս իդա բադան, ըդ հըմեն քզի պես տղա ին էղի, հըմեն բերեր էր սանաթ սովրցուցեր, օր սովրեր ին, գլուխ ուրանց կտրեր է. հմկա քզի ապսոսացի, քզի ինչ օր կըսիմ՝ հանկաջ էրե, քզի ինչ որ կը սովրցու, ըսե՝ չիմ սովրեր ի, օր պրծընաս:

Տղեն կըսե. - Թող էղնի:

Գիկա բըբռեջ, ըդրան ինչ օր կը սովրցու, տղեն կը սովրի, կըսե՝ չիմ սովրերի:

Բըբռեջ կըսե. - Իդա ի՞նչ էշ տղա էր էկավ ընձի ըռաստ, ըդրա պապ չէկավ, իդեք զէշ տաներ. պրծնենք ձեռնեն:

Էդ հըմալով կը թամըմի տարին. տղի պապ գիկա, հլը չսած «օֆ-օֆ» հըմը կառնե զտղեն, կը բերե դուս, կըսե.- Առ զքու էշ տղեն, իդա տարիմ կը սովրցում, չը սովրիր:

Տղի պապ առավ զուր տղեն, գնաց: Բըբռեջ լե դառցավ ուր տուն: Պապ ու տղեն լե շատ գացին, քիչ գացին՝ Աստված գինա: Պապ ըսեց տղին. - Տղա՛, լաո՛, մկա էղներ մեկ հատ ծմերուկ, ուտենք:

Տղեն ըսեց. - Կյակե, ես կէղնիմ բոսդան, դու ինչ ղտըր գուզիս կի, հմը մեկ հատ մեծ կարմիր պոչով ծմերուկ վերցու, դիր վըր ճամբուն, էն ես իմ, մկլտոնք լե ծախե, ինչ կէնիս՝ էրե;

Պապ ըսեց. - Աղեկ:

Տղեն էղավ բոսդան, պապ լե ուզածի խտըր կերավ. էն կարմիր պոչով ձմերուկ վրուց ու զբոսդան ծախեց. փշում գնաց տեսավ օր լե տղեն հետևեն գիգա:

Փշում գնացին. պապ շատ ծարվցավ, ըսեց. - Տղա՛, լաո՛, շատ իմ ծարավցի, իմա՞լ էնիմ. ջուր լե չիկա:

Տղեն ըսեց.

- Կյակե, ես կէղնիմ հաղբուր. դու խմե;

Տղեն էղավ հաղբուր. պապ ջուր խմեց, գնաց:

Տղեն հետևեն էկավ, ըսեց. - Կյակե, ես կէղնիմ ծի, դու զիս հեծի:

Տղեն էղավ ծի, պապ լե հեծավ, գնաց տուն:

Տղեն գենա դարձավ տղա:

Ըդրանք աղքտցան. տղեն ըսեց պապուն. - Կյակե, ես կէղնիմ ծի, դու զիս տար, ծախե. հըմը զիմ գյամ չծախիս, օր զիմ գյամ ծախիս, ես լե կէրթամ:

Տղեն էղավ ծի, պապ առավ զծին, տարավ տուքներ, էկան մուշտրիք, ըսեցին. - Ի՞նչ տանք ծիուդ:

- Հզար օսկի:

Զծին ծախեց, գյամ դառցուց, բերեց, տեսավ օր տղեն տուն նստուկ է: Մեկել օր տղեն ըսեց ուր պապուն. - Ես կէղնիմ դևա, դու տար, զիս ծախե, հըմը ինչ խտըր լե փարա իտան, իմ հուլար չտաս:

Բըբռեջ լե լսեց էդ տղեն հըմեն բան սովրեր է. էլավ գնաց, տեսավ տղեն էղեր էր դևե մի, գնաց դևի տիրոջ մոտ, ըսեց.- Ի՞նչ իտամ դևիդ:

- Էրկու հզար օսկի, հըմը հուլար չըմ իտա;

Ըսեց. - Չէ, իրեք հզար օսկի կիտամ. հուլար լե հետ կառնեմ:

Ըսեց. - Չըմ իտա զհուլար:

Նաիսա, վեց հզար օսկու, զհուլար լե հետ առավ;

Հեծավ զդևեն, գնաց. ճամբեն ըսեց. - Հեյ գիտի շանորդի, դու կըսիս չըմ սովրեր ի սանաթ. հըմկա զքզի տանիմ տուն. դու կը տեսնաս զքում:

Տարավ տուն, հուլար տվեց կնկա ձեռ, ըսեց. - Բռնե զիդա, ես էրթամ զդանակ բերիմ, մորթիմ:

Ըսեց՝ աղեկ:

Մարդն օր գնաց դանկի, կնիկ թողեց զդևեն ու ճչաց:

Դևեն էլավ ծուկ մի, փախավ:

Մարդն էկավ կնկա վրեն, տեսավ կնիկ պատեր է գետին, թողեց զկնիկ, էղավ օձ, ընկավ ձկան էտև: Հըմը ծուկը գոլից թռավ դուս, էղավ

օձ, փախավ. էն լե էղավ օգնի, ընկավ էտև, քիչ մնաց օր հասներ, տղեն էղավ ճնճղուկ մը թռավ: էն լե էղավ ցուրուր, ընկավ էտև. հըմը փշում մնաց հասներ, էն էղավ հընծեղ մի ու փախավ. էն լե էղավ բաշու ընկավ էտև, քիչ մնաց որ հասներ, բռներ. հընծեղն էղավ գել մի ու փախավ. էն լե էղավ սառջ մի բըրդեց էտև, քիչ մնաց օր հասներ. էն կէնե էղավ թևավոր ու թռավ. էն լե ընկավ էտև:

Թագավոր լե ուր փանճարից կիշգեր, օր էրկու ճնճուղ կը կռվըտին. մեկ լե տեսավ օր մեկ ճնճուղ, ֆը՛ռ, ուր փանճարից ներս մտավ: էղավ նուռ մի, ղրվավ թաղչեն: Թագավոր շատ վախեցավ, զուր ըռանկ թալեց. մեկ լե տեսավ օր դարվեշ մի ներս մտավ, ըսեց՝ յա-հո՛ւ:

Թագավոր բարև առավ. հանեց, էրկու-իրեք ղուրուշ տվեց: Դարվեշ չառավ, ըսեց. - էն նուռ տուր ընձի:

Թագավոր ըսեց. - Գնա, դու քու ձեռով առ:

Դարվեշ գնաց, ձեռ թալեց որ պտի առներ, նուռ հընկավ գետին, փլխավ, հատեր ցրվըվավ, էրկու հատ լե հընկան թագավորի դոշկի տակ:

Դարվեշ էղավ ճետ մի, կերավ զիատեր, հըմը զէն էրկու հատ չտեսավ:

Օր կերավ, կանչեց. - Կուկռուռռու...

Յանի հասկցուց թե՝ դու իմ փորու մեջն իս: էն երկու հատ լե էղավ գուզ մի, զճետ խեղդեց ու կենա դառցավ էղավ մի խորոտ ջիել տդե մի ու ըսեց թագավորին. - Թագավոր ապրած, զիս կը ճանչնա՞ս:

Թագավոր ըսեց՝ չէ:

- Ես էն տղեն իմ, օր իմ պապ էկավ քու աղջիկ ուզեց ընձի համար, չտվեցիր, ըսիր. - Թըղ սանաթ սովրի. մկա կը հավնի՞ս ընձի, քու աղջիկ կիտա՞ս:

Թագավոր ըսեց՝ հա:

Բերին զաղջիկն ու զտղեն պսակեցին. յոթն օր, յոթն գիշեր խարսնիք էրին, ընտրանք հասան ուրանց մուրազին. դուք լե հասնիք ձեր մուրազին:

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լե սապիտ էղնողին: